

Ա. Պետերբուրգի դեսպան գեներալ Շան-զիի հետ: Գամբետտա զարմանք յայտնեց, որ գեներալ Շանզի վճռել է թողնել իր պաշտօնը: Վերջինը նրան պատասխանում է. «Դուք մոռանում եք, որ դեսպանը երկու տեսակ պարտականութիւն ունի, առաջինը պաշտպանել իր հայրենիքի շահերը և երկրորդ հետեւել այն միջնորդութեան քաղաքականութեանը, որ նրան դեսպան է նշանակել: Ֆրանսիական շահերի պաշտպանութիւնը ինձ համար միշտ հեշտ է եղել, բայց ես չեմ կարող հետեւել նոր միջնորդութեան քաղաքականութեանը, որովհետեւ դա անհամապատասխան կը լինէր իմ քաղաքական անցեալի հետ: Գամբետտա հրաւիրեց Շանզիին ցոյց տալ այն կետերը, որոնց վերաբերութեամբ Շանզի իր հետ համաձայն չէ: Վերջինը մասնացոյց կղաւորական խնդրի վրա: «Այդ կողմից զուգէ դուք իրաւացի եք, նկատեց Գամբետտա, որովհետեւ ես վճռել եմ կրօնական հարցերի վերաբերութեամբ խիստ միջոցներ գործ դնել»: — «Տեսնում եք, պատասխանում է Շանզի, մենք ձեզ հետ 25 լույս կորցրինք և չը կարողացանք համաձայնութիւն կայացնել: Ինձ մնում է միայն խնդրել, որ յանձնէք ինձ հրաժարական թղթեր»: Գամբետտա չընդունեց Շանզիի հրաժարականը, յոյս յայտնելով, որ նա կը փոխի իր վճիռը: Ֆրանսիական կառավարութիւնը տեղեկութիւններ խնդրեց Բելլինից, թէ ինչպէս կը վերաբերվի պաշտօնը և գերմանական կանցլերը, եթէ Անտ-Վալթեր տեղ դեսպան նշանակվի բարձր դուրսը: Բելլինից լաւ պատասխան տալովեցաւ. Գրեգորսել յայտնի է իր ծանօթութեամբ գերմանական գործերի և լիզուի հետ, որ շատ քիչ է պատահում Ֆրանսիացիների մէջ: Արտաքին գործերի մինիստրութեան մէջ նա կառավարում էր գերմանական բաժինը և այդ պատճառով գերմանական դեսպանը փարիզի մէջ

լինէր երեսփոխան ընտրուեցաւ, և միշտ այն համոզման տէրն է, որ 78-ի պատգամաւորութիւնը ի Պէրլին մեծ սխալներ ըրաւ, պատասխանատուն պատրիարքն է:—

Ի. մասն անգոյն է. գէշ, աղէկ, բարի, չար, տիրացու, կռուարար. այսօր դեր, վաղը դէմ. այսօր դէմ, վաղը դեր, որով համար կենսական պէտք մ'է կռուելը, տալալելը:

Ահա այս զանազան խումբերն են որ պատրիարքի հակառակ են. բայց գլխին թէ ճարտարութեամբ հարկ է չարժիլ. ասոնք իրարու հետ ժողովք չեն ընել, բայց բնազդմամբ իրարու կը միանան:—

Այս խումբերը, որք ի սրտէ պատրիարքի անկողնի կը փափազին իրենք իսկ պարտաւոր պիտի ըլլան մերժել այդ հրաժարականը, վասն զի ազգին տառապանքներն են որ պատրիարքը մի առ մի կը պարզէ աշխարհի առաջ իր հրաժարականը: Եւ ամեն հայու պարտաւորութիւնն է ու և նկատում զոչնչ և պատրիարքի ուժ և նեցուկ ըլլալ:—

Բայց պատրիարքը իր հրաժարականը ետ պիտի առնէ. շատ հաւանական չէ, վասն զի գլխին թէ դարձեալ Դուռը զինքը պիտի խաբէ, բայց իրեն յաջորդ մը գալով զուգէ կառավարութիւնը իր ընթացքն ալ փոխէ: Արդէն այժմէն նոր պատրիարքի կամ տեղապահի վրայ կը սկսին խօսել. ոմանք Մուրադեան Մեքիսեղիկ եպիսկոպոսը կը ներկայացնեն ընտրելի: Այս անձը ծանօթ է ձեզ. ինքն լուրջ և խոհական անձի մը համարը ունի. թէպէտ իզմիլի մէջ, որ առաջնորդութեան պաշտօն կը վարէ, շատ կանոնաւոր վաճառականներ դժգոհ են իրմէ: Բայց Մուրադեան ազգին մէջ աղէկ անուն ունի ընդհանրապէս: Սակայն իր քաղաքական համոզումներն ալ ծանօթ են, և քանի որ մենք այսօր քաղաքական դիրքի մը մէջ կը գտնուինք, մեր պատրիարքին քաղաքական կարծիքներն մեծ նշանակութիւն ունին մեզ համար: Արդ քանի որ Մուրադեան սրբազան իր համոզմանց մէջ հաս-

կարողացաւ լաւ կարծիք յայտնել իր իշխանութեանը դը-վուրսի մասին: Գերմանական դեսպան իշխան Զօհենյօս խօսակցութիւն ունեցաւ Գամբետտայի հետ «Paris» լրագրի մէջ տպագրած յօդուածի մասին, որի մէջ ասված է թէ կոմս Զերբերտ Բիսմարկ գերմանական կանցլերից մի յանձնարարութիւն է ստացել անգլիական կառավարութեանը յայտնելու համար: Իշխան Զօհենյօս հաւատացնում էր Գամբետտային, որ գերմանական կառավարութիւնը չէ էլ մտածել մի բան առաջարկել Անգլիային և որ նա ցանկութիւն չունի միջամտել այնպիսի հեռաւոր հարցերին, ինչպէս եզրպատական խնդիրն է: Բացի այդ դեսպանը յայտնեց, որ այդպիսի լուրերի տպագրութիւնը կիսապաշտօնական լրագրիներէ մէջ կարող է միայն դժուարութիւններ ծագցնել: Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ: Գամբետտա նկատեց, որ նա ժամանակ չունէր մամուլով զբաղվիլու համար և որ վերջին ժամանակներում նա չէր կարող ոչ հետեւել և ոչ հակել լրագրութեան վրա: Այս անգամ «Paris» լրագիրը յայտնել է իր անձնական կարծիքները և ոչ թէ Ֆրանսիական կառավարութեան նկատմամբ իշխան Զօհենյօս ի նկատի առաւ այդ մեկնութիւնը:

Ներքին գործերի մինիստրը մի շրջաբերականով դիմեց Ֆրանսիական պրեմիէրմինիստրին, որոնց նա պատուիրում է իրանց բոլոր հոգեւոր նուիրել տեղական շահերին և չենթարկվիլ տեղական ազդեցութեանը: Բացի այդ մինիստրը խոստանում է ուշադրութիւն չը դարձնել տեղական գործերի վերաբերութեամբ այն միջնորդութիւնների կամ խնդրանքների վրա, որոնց յանձն կառնեն պարլամենտի անդամները կամ մասնաւոր անձինք: Տեղական բոլոր հարցերը պրեմիէրմինիստրի իշխանութեանը կը լինեն յանձնված:

տաւ է, ազգին համար խիստ վնասակար է նորա պատրիարքական գահ բարձրանալը: Այս բանի շատերն ալ գիտեն և կուզեն որ նա այժմ հեռի մնայ:— Իսկ անոնք որ Բ. Գրան բարեկամութիւնը վայելելու քաղաքականութեան պաշտպան են, նոքա Բարդուղիմէոս եպիսկոպոսի ընտրելութիւնը կը պաշտպանեն: Բարդուղիմէոս եպիսկոպոս, ձեռնադրուել և սիրելի աշակերտ Գեորգ կաթողիկոսի, որի յաջորդեց Բուրսայի առաջնորդութեան, Սաիդ բաշայի սիրելի նմանապէս, շատ հաւանականութիւն կայ որ Ներքին յաջորդութիւնը ժողովքէ, թէպէտ յայտնի է որ ազգն զիս չը սիրէր:— Բայց Ազգ. ժողովոյ մէջ զանազան դարձեալներ յայտնուեցան թերեւ նորա ընտրելութիւնը, գէթ իր տեղապահ:— Բարդուղիմէոսեանք կըսեն Բ. Գրան զիմարդը ինչպէս չափեցանք, անկարելի է որ Բ. Գրանը խոնարհի, ընտրենք մի անձ որ նորա հաճելի ըլլայ, Գրանը պարտաւոր պիտի ըլլայ զմզմ գոհացնել որպէս զի զմեզ չափ և ցոյց տայ թէ մեղաւորը Ներքինն էր:— Այս նկատումները շատերը համոզած են:— Եթէ Բարդուղիմէոս ընտրուի, չուտով պիտի տեսնուի արգարե որ առաջնորդը իրենց տեղը կը վերադառնան, զանազան անկարելի խնդիրներ կը լուծուին և այս բաներն փողի և սրնիզի ծայնեցով պիտի մեծցնեն:— Բայց ազգը միշտ ցուրտ, միշտ, պաղ պիտի գտնուի այդ եպիսկոպոսին դէմ, միշտ կատկածի մէջ որ ազգին կենսական հարցերու մէջ ազգին շահերն չեն որ նա պիտի պաշտպանէ: Մարդիկնք որ այս ձախորդ խորհուրդը ետ կենայ, որ կողմնորդուանք, ինչ որ ալ ըսենք, Ներքին սրբազանի հրաժարականի ընդունելը դժբաղդութիւն մ'է: Միթէրարութիւնը ունէինք, ազգը պատրիարքական հարցով բաժանեալ չէր, ամենքը բոլորած էին Ներքին շուրջը, և ամեն զրգազգ վայրկեաններու մէջ կը մտածէինք թէ հայ անձ մը, որոյ թերութիւնները ինչ ալ ըլլան, միշտ վստահ էինք թէ երբեք ազգը չը մասնէր:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը համալսարանի անդամների ընդունելութեան ժամանակ յայտնեց, որ կրօնը իր բաժինն չէ վերաբերում և որ ինքն կը հոգայ օրէնքների և պետութեան շահերի մասին և եկեղեցու հետ յարաբերութիւններ ունենալու ժամանակ խստութեամբ կը պահպանի կօնկօրդատի սկզբունքները:

ԳԵՐՄԱՆԻԱ

Նոյեմբերի 24-ին լայխստագի նիստի ժամանակ ներկայ էր բազմաթիւ հասարակութիւն: Ամենից առաջ լայխստագը ընդունեց—ձայների ահագին մեծամասնութեամբ—Հազենկիկերի առաջարկութիւնը Բրեսլավի մէջ յարուցված դատաստանական հալածանքը պատգամաւոր Կրեկկերի դէմ դադարեցնելու մասին, և Կրեկկերի առաջարկութիւնը պատգամաւոր Հազենկիկերի դէմ Լայպցիգի մէջ դատաստանական հալածանքը դադարեցնելու մասին: Լայխստագը մերժեց Մանտէյֆելի առաջարկութիւնը այդ հարցերը պարլամենտական մասնաժողովի քննութեանը յանձնելու մասին: Այսուհետեւ լայխստագը սկսեց ըննել կայսերական բիւրոյն 1882 և 1883 թուականների համար և մի փոխառութեան օրինագիծը պատերազմական և ծովային մինիստրութիւնների և կայսերական երկաթուղիների վարչութեան ծախսերը ծածկելու համար: Կառավարութեան կողմից առաջինը խօսեց կայսերական գանձարանի գլխաւոր քարտուղար Շօյց, որ հաշիւ տուեց 1880 և 1881 թուականների ֆինանսական գործերի մասին: Այդ հաշիւը 12,000,000 մարկ դէֆիցիտ է ցոյց տալիս: Խօսելով եկող երկու տարիների բիւրոյն մասին, Շօյց յայտնեց, որ կառավարութիւնը յոյս ունի 15,000,000 մարկ

Պահ մը կը կարծուէր որ Կիլիկիոյ կաթողիկոսական հարցը գոհացուցիչ կերպով պիտի վերջանայ: Նոյեմ. 8-ին կիրակի Բեռլինի եկեղեցին փառաւոր պատարագ կը մատուցանէ կաթողիկոսը, յետ որոյ Զալմուրեանի տունը սեղան. հոն տեսնուեց, կաթողիկոսական յանձնաժողովը, գանաղան երեկել բաժանիկը կը պարպուին, ողջայն կուտան ապագային. պատրիարք և կաթողիկոսը կը համբուրեն. երեկոյն կաթողիկոսը Պատրիարքի տունը կերթայ, հիւր կըլլայ:—Սակայն ժողովուրդը անձկութեամբ կը հարցնէ ինչ եղաւ արդիւնքը: Ինչ որ գիտեցինք այս է թէ Կիլիկիոյ կաթողիկոսը գերազանց արժան է ծանօթեցնել իշխանութեանը և իր թեմին մէջ պիտի յիշատակէ զիս պատարագի մէջ. իսկ ասոր փոխարէն իշխանութեան կաթողիկոսը այլ ևս չենթաւ և հետեւալ ու անվաւեր չը պիտի ազդակել որ խորամանկ Միլարի կաթողիկոսը ու և զգուշացնելու չէր յարուցաներ այս պայմանը ընդունելու, վասն զի լաւ գիտէր թէ վեհ. Գեորգ կաթողիկոսը Կիլիկիոյ կաթողիկոսը հերքեալ և անվաւեր յայտարարել էա պիտի չը կենայ, որով Միլարի կաթողիկոսը իր զոհ մը պիտի նկատուի, և ու և կը կերպով մեղապարտ չը պիտի նկատուի: Ներկայեալ կը գտնէր կաթողիկոսի և յանձնաժողովոյ ծրարիւրը:—

Սակայն ժողովուրդը մէջ կը խօսուէր, իշխանի և Կիլիկիոյ յարաբերութեանը լոկ ներքին խնդիր են. ինչ եղան կառավարութեան հետ տեղի ունենալը յարաբերութեանց հարցը: Ահա այս միջոցիս կրմանսնք որ ամենակի փոփոխութիւն չէ մտած այս խնդրոյն մէջ, Կիլիկիոյ կաթողիկոսը միշտ նոյն է, այսինքն քաղաքականապէս բաժանեալ Կ. Պօլսոյ պատրիարքական իշխանութիւնէն: Բ. Գրանը նորա պատգամաւորութեան, և լրագիրը կը ծանուցանեն թէ տարեկան 420 լիւրա (մօտ 4000 քուբլ) Բ. Գրանը

աւելորդ ունենալ: Պատգամաւոր Բիստեր ասաց հետեւեալը. «Որովհետեւ այս անգամ լայխստագի պարապմունքները սկսվեցան կայսերական գահական ճառով, որ դուրս է եկել պետական կանցլերի գրչի տակից, հետեւապէս վերջինի պատասխանատուութիւնը լայխստագի առաջ աւելի մեծ է, քան թէ այն ժամանակ, երբ լայխստագը ուրիշ կերպ էր բացվում: Գահական ճառի մէջ ասված է, որ բիւրոյն տնտեսական առաջադիմութեան միջոցաւ ապացոյցներ է ներկայացնում, բայց մենք այդպիսի ապացոյցներ չենք նկատում: Բոլոր ապացոյցները, որոնց մէջ գտնում ենք բիւրոյնի մէջ համաձայն են գերմանական առեւտրական ժողովների հաշիւների հետ, որոնցից մեծամասնութիւնը այն եզրակացութեան հասաւ, որ տնտեսական նոր քաղաքականութիւնը քննարկելու պատգամաւորութեան կենթարկվել, բայց նրանք ինչ կարող են անել փաստերի դէմ: Պետական կանցլերի տնտեսական քաղաքականութեան պաշտպաններից նրանց առաջ մնացել է միայն Մինիստրից: Չը կան այլ ևս ոչ վարքերէլ, ոչ կոմս Շտոլբերգ և ոչ Շտուլման: Կայսերական գահական ճառի մէջ կրկնվում են մի քանի խոստումներ նոր հարկերի և ծխախոտի արտօնութեան օգնութեամբ մի քանի ծանրութիւններ թելթեւացնելու մասին: Բայց այդ նոր աղբիւրները նշանակված են այնքան բազմաթիւ նպատակների համար, որ ահապայի յիշեցնում են անկեղծաւոր այն մարդու մասին, որ մի և նոյն ժամանակութիւնը կտակեց մի քանի անձանց և երբ նրան յիշեցրին, թէ այդ անկարելի է, նա պատասխանեց. «գոնեա ես դրանով բարեկամներին կապացուցանեմ իմ բարի կամքը: Եթէ պետութիւնը չէ կարող կառավարել իր խոստումները, նա կը յարուցանի

թուշակ կապած է. կաթողիկոսին. թէպէտ այս վերջինը սխալ ըլլաւու է, զի պատրիարքարանէն ոչինչ գիտէին:—Պատրիարք այցելութեան կերթայ կաթողիկոսին և կառավարիչ համաձայնեալ պայմանագիրն ստորագրել, կաթողիկոսը կը մերժէ. ամեն ինչ նորէն կը մտնէ առջի վիճակին մէջ:—Հոս մեծ թշնամութիւն կայ Միլարի և կաթողիկոսի դէմ:—Այդ խորամանկ անձին համար արդէն գրած ենք որ երբեք վստահանալու չէ. միշտ կը խաբէ, և մասնական շահերը ազգին ընդհանրական շահերէն վեր կը դառնէ: Այն եկեղեցականներն է, որոց համար ազգ, կրօնը, ոչինչ նշանակութիւն ունին: Ինչ կուզեք որ ընէ Ներքին երբ իր զէմը այսպիսի անձեր կը տեսնէ, որ փոխանակ ազգին տունը շինելու աշխատելու գայն կը քանդեն:—Շատերը ունեն դեռ այն համոզումը որ մեծամեծ ազդեցութեանց տէր անձինք համաձայն են կաթողիկոսի, բոլորն ալ անձնական նկատումներով և կը դաւադրեն ազգային շահուց: Մենք ալ այս կասկած ունենք, զի այնպիսի իրողութիւններ կը տեսնենք որ ուրիշ կերպ բացատրել անկարելի է. բայց ինչ օգուտ, այս դաւադրութեանց վրայ երկար խօսել չէ կարելի է, վասն զի որպէս որ ալ մեծ կասկածներ կան, բայց և այնպէս կասկած են. իրական փաստեր ունենալն զգուշար է: Ամեն կերպով ճշմարտամի մէջ ենք. Հայկական հարցին ոչինչ լուր:

Հայկակ

այնպիսի անբաւականութիւն, որ կարող է կարգապահութեան սկզբունքներն փնտրել: Յիշատակեալ մտքերն ծխախոտի արտօնութիւնը, բայց նա, չը կամենայով ծանրաբեռնել խեղճերէն, ոչնչացրեց հացի և տաւարի հարկը: Սրանով նա զանազան վում է մեր կանցելից, որ ամենից առաջ հարկ դրեց հացի և մսի վրա: Բիւտսերի ճառից և մի քանի պատգամաւորներին նը- կատողութիւններէն յետոյ ըստստագի նիս- տը փակեցաւ:

Իշխան Բիւտսերի պարլամենտական վեր- ջին ճաշի ժամանակ խօսակցեալ զիպլումա- տիական գործածական լեզուի մասին: Մինչև այժմ Բիւտսերական լեզուն տիրապետող է զիպլումատիական յարաբերութիւններէ ժա- մանակ, բայց գերմանական զիպլումատները գրագրութիւն են անուամբ գերմանական լեզ- ւով, թէպէտ ստացված պատասխանները ուրիշ լեզուներով են լինում գրված: Պար- լամենտական գործերի մասին խօսակցու- թեան ժամանակ իշխան Բիւտսերի յայտնեց, որ պարլամենտական այս շրջանին նա ան- համաձայնութիւն չի ունենայ ըստստագի հետ և որ նա բոլորովին մտադիր չէ ար- ձակել այժմեան ըստստագը: Յունվարին նա կը գումարի պրոյեկտի սէյմը, իսկ զատկից յետոյ ըստստագը: Գահակն ճա- ռի մէջ յիշված խեղճերէնը միանգամից չին առաջարկվի ըստստագին: Կայսրը նրանց խելոյն չի հաստատի, որովհետև նա գիտէ, որ այդ գործի համար բաւական ժամանակ է հարկաւոր:

ԱՆԳԼԻԱ

Լորդ Գրեյնվիլ ռազմիկն անգլիական հիւ- պատոսին եղիպտոսում հետեւեալ հեռագրի- րը Անգլիայի քաղաքականութեան վերաբե- թեամբ եղիպտոսում: «Անգլիական քաղա- քականութիւնը եղիպտոսի մէջ ուրիշ նը- պատակ չունի բացի այդ երկրի զարգացու- մը, վայելելով սուլթաններէ ֆիւմաններէ համեմատ ազատութիւնը: Եղիպտոսի զար- գացումը, ինչպէս և ուրիշ երկրներէ, կախ- ված է ժողովրդի առաջադիմութեանց և բարօրութեանց: Այդ պատճառով անգլիա- կան կառավարութիւնը միշտ խորհուրդ է տուել խեղճիկն ազատել ժողովրդին նրա ընկճված գրութիւնը: Լուսաւորութեան տարածումը, ծանր հարկերի ոչնչացումը, պարտադիր աշխատանքի թիւթեացումը, այդ բոլորը տրվեցաւ եղիպտական ժողո- վրդին ֆրանսիական և անգլիական վերա- հսկողների օգնութեամբ և միջամտու- թեամբ: Աւելորդ ենք համարում կրկնոր- րէն խօսել, որ եղիպտոսի համար անհրա- ժեշտ է վայելել իր անկախութիւնը: Եթէ անգլիական կառավարութիւնը արգելքներ դնէր այդ անկախութեան զարգացմանը, դա հակառակ կը լինէր մեր սեփական ա- ւանդութիւններին: Եթէ եղիպտոսում կա- կածում են մեր գործունէութեան եղանա- կի մասին, դժուար չէ ոչնչացնել այդ կա- կածները դրական ապացոյցներով: Միւս կող- մից եղիպտոսը Թիւրքիայի հետ միացնող կապը մի գրաւական է օտար միջամտու- թեան դէմ: Հէնց որ այդ կապը կոչնչանայ, եղիպտոսը փառասէր մեղադրութիւններէ գոհ կը դառնայ: Այդ պատճառով մենք հարկաւոր ենք համարում պահպանել այդ կապը: Միայն անխելանութիւնը կա- րող է պատճառ դառնալ մեր քաղաքակա- նութեան փոփոխման եղիպտոսի մէջ: Բայց մենք յոյս ունենք, որ խեղճիկը և Շերիֆ- փաշա այդպիսի անկարգութիւններէ ա-

ռաջը կանոնեն: Մենք առիթ ունենք կար- ծելու, որ ֆրանսիական կառավարութիւնն էլ այդպէս է նայում գործին: Առաջնորդ- ված անշահասէր նպատակներէ ֆրանսիան և Անգլիան մեծ ծառայութիւններ մատու- ցին եղիպտոսի ֆինանսական և նիւթական գրութեան բարեօրմանը: Նոյն բանին կա- րելի է սպասել և ապագայում, եթէ զըլ- խաւոր նպատակը եղիպտական ժողովրդի օգուտը կը լինի: Բայց ֆրանսիայի կամ Անգլիայի կողմից աշխատանքը իր ազդե- ցութիւնը ընդարձակելու մասին վերջ կը դնի միաձայն գործունէութեանը»:

Անգլիական լրագիրները գրեթէ միաձայն պահանջում են ստիպողական նոր միջոցնե- րի գործադրութիւն իրանդիայի մէջ կար- գապահութիւնը վերականգնելու մասին: Բայց ոչ ոք չը գիտէ, թէ այդ նպատակով կառավարութիւնը ինչ կարող է անել: Ա- ռանց այդ էլ իրանդիայի մէջ պահվում են 50,000 զօրք և 10,000 պոլիցիական- ներ: Իրանդիայի փոխարքան և իրանդա- կան գործերի միւնիստր Յորտոնը կարող են պաշարված գրութիւն յայտնել, երբ կա- մենան, և կալանաւորել ամենքին, ում կա- մենան:

ՆԱՄՄԱԿ ԹԻԻՐԲԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 18 նոյեմբերի

Ներսէս պատրիարքի յոյժ սակաւաթիւ, բայց բանասերութիւններուն անունները և զա- նազան էնթրիկները յայտնի են ձեզի: Աստուծոյ ամբաստանութեանց զլուստը կէտն այն է թէ Վատրիարքն Թիւրք կառավարութեան հետ այն կերպով վարուեցաւ մինչև հիմայ հայկական հար- ցի նկատմամբ որ Բ. Գուրգ զայրանալով ըսկ- սաւ առաւել ևս հաւածել ոչ միայն Հայաստանի հայերը, այլ և Թիւրքիայի հայերն առնա- սարալ: Այսպէսով ոչ միայն բարեկեցութեան չի բականացան, այլ և աւելի վատթար եղաւ հա- յոց կացութիւնը:

Մի խօսք որքան և սուտ, անտարմաքան ըլ- լայ, երկար տանէ կրկնուելով կարելի է որ ճշմարտութեան մի երեսից առնէ, ինչպէս եղած են ժողովրդեան բերանը գտնուած հաղաթաւոր յիմար առաջներու համար: Հարկ է ուրեմն մի- անգամ ընդ միշտ ցոյց տալ թէ որ ատորձան անտեղի, մտացածին, չարամիտ է այս ամբաս- տանութիւնը և թէ ճիշդն եղելութեանց բնա- կան բերմունքն են երեք տարիէ ի վեր հայոց ազգին զլուսն պատահածներն:

Չեմք կարծիք որ գտնուի մի հայ, որքան կու- ռացած և թրքամոլ իսկ ըլլայ, որ տրտնջայ թէ ինչու հայկական հարցը միջազգային մի հարց եղաւ, կամ թէ ինչու գտնուեցան այնքան ան- քաղաքազէտ հայեր, որք հայոց վիճակը օտար տէրութեանց միջամտութեամբ բարեօրել փա- փաքեցան: Այս ըստ ինքեան փրկարար վիճիւն արձակուելէ վերջը, կը մնար ուրեմն ժամ առ ժամ անոր գործադրութեանը սպասել և բնա- կան էր որ ո՞վ որ պիտի օգուտ քաղէր անկէ, ամենին աւելի նմ անհամբեր գտնուէր տեսնե- լու այդ խոտոտումներուն վաղ ընդ փոյթ իրակա- նանայի: Պաշտպան տէրութիւնը որչի՞ հարցե- րով զբաղած ըլլալով մինչև հիմայ, Թիւրքը, ինքն իր կամօք, պիտի ներմուծէր այդ արմա- տական բարեկեցութեանը ի Հայաստան և հետզհետեւ ծանուցանէր վեջ մեծ տէրութեանց: Բայց Թիւրքը ոչ միայն անհոգ այլ և ընդդի- մադիր եղած է և պիտի ըլլայ մինչև վերջը այս տեսակ ձեռնարկութեանց, վասն զի տաճկու- թիւնն Եւրոպայէն արտօնուած, Աֆրիկէն յուսակաւոր, Ասիան միայն կը նկատէ իբրեւ իւր վերջին ապստոանարանն և մեծ երկիւղ ունի որ նա ևս իւր իշխանութիւնն չը պրծանի այլ և այլ վարչական ներքին փոփոխութեանց պատը- ւակու: Հետեւաբար ոչ մի զգալի բարեկեցու- ցում ըրած չըլլալով, չէր ալ կարող ծանուցա- նել որ և է մի կատարուած բան: Թիւրքական խորամանկութեամբ մինչև ցայժմ նա կը յուսայ որ ինդիան երբ այսպէս հնանայ, զուցէ և մո- ռացութեան մէջ կիցի:

Եթէ այն միջոցին հայ ազգը խմբովին, կամ անոր զուխը յանուն ազգին, ամենայն մեղմու- թեամբ և ամենայն իրաւամբ, մի կողմէն իր գանգատները նորոգեց, միւս կողմէն յեղե- ցուց որու որ անկ է այն հանդիսապէս եղած խոտոտումը, ինչ կայ այդ վարմունքի մէջ ան- քնական և անքաղաքազէտ:

Հարստահարութեանց քաղաքականին, նիւ- թական ճնշմանց վրայ բարոյական ճնշմանց ևս յաւելնալն ուրիշ բան չը նշանակեն, եթէ ոչ այդ բարեկեցութեանց ևս քան զնս ստիպողական ըլլալն, որոնց համար Թիւրք կառավարութիւնն ամեն ճիղ կը թափէ որ թէ հայերն և թէ մեծ տէրութիւններն ձայն չը բարձրացնեն բնաւ:

Այս նպատակին հասնելու համար Սուլթանին նախարարներն ա՜ն ու սուլթան կաշխատեն ա- ծանցել Թիւրքիայի հայոց սրտին մէջ, սպառ- նալով ջնջել հայն իր արմատէն: Սայիդ փաշան չէր որ ըսաւ Բարիդի Debats լրագրի թղթակ- ցին թէ: «Հայոց հարցը մինչև սկսի, մի հայ չը պիտի մնայ Թիւրքիայի մէջ»: Իսկ մեծ տէրու- թեանց նկատմամբ կաշխատեն խաբուկատիր խոտոտումներով յետաձգել արմատական բարեկե- ցութեանը և կը տեսնենք որ մինչև հիմայ յա- շտեղեցան:

Եթէ Թիւրքը մասնաւոր մի ատելութիւն ցոյց կը տայ հայկական տարրին դէմ, եթէ զազանա- կան ձեռնարկութիւններով հայուն գոյութիւնն իսկ անյետանելի կը նկատի, ո՞վ է այդ տեղ մե- ղաւոր և հարկ էր որ Ներսէս պատրիարքն ան- փոյթ մնար բոլորովին 61-դ յօդուածին չուտով գործադրուելուն համար, վախճալով որ մի գու- ցէ Թիւրքաց զայրույթը զրգռէ: Այս յօդուածին խմբագրութեան վերջը, որպէս զի չը պատահէր հայոց գլխին ինչ որ այժմ կը տեսնենք, մի ճա- նապարհ միայն կար, այն էր՝ ոչ միայն անխո- սուկ մնալ հայոց յուսի վիճակին վրայ, այլ և փառաբանել զԱստուած ամեն անգամ որ Թիւր- քըն, ըստ իւր վաղեմի սովորութեան, հայու գլխին իւր լախտը իջնցնէր: Պէտք էր որ պատ- րիարքն, ամեն անգամ որ տեղեկութիւն խնդ- րէին իրմէ իւր ժողովրդեան վիճակին վրայ, ո- չնչն զանգառ չարտասանէր և երբեմն իսկ պատ- րիարքական կնիքով պաշտօնական յայտարա- րութիւններ ընէր ըսելով թէ «Հայոց ազգն որ ի Թիւրքիայ չառ երջանիկ մի կացութեան մէջ է և Հայաստան կատարեալ ապահովութիւն և արդարութիւն կը տիրէ, ի նորոյն բարեկեցութեան հայրախնամ կառավարչներն»:

Այսպէս պէտք էր վարուել ահա Ներսէսն, որպէս զի այժմեան իւր ըստ և շահամոլ սովո- ներն չընէին այն անհիմն և յիմար ամբաստանու- թիւնը որով կը ձգտեն իւր անունը նսեմացու- նել և ներկայացնել զայն իբրեւ քաղաքական գաւազդութեանց միամիտ գործիք: Մի խնդիր է գիտնալ թէ՛ Ներսէսի տեղն եթէ մի ուրիշը ազգային վարչութեան գլուխը գտնուէր վերո- յիշեալ լեզուն պիտի բանեցնէր, թէ կէտ առ կէտ Ներսէսին հետեւած ճանապարհին պիտի հետեւէ: Հետաքրքիր է նաև կանխաւ իմանալ թէ այժմ անոր յաջորդողը պիտի կարողանայ մեղմել Թիւրքաց թշնամական ոգին և ատելութիւ- նը հայոց դէմ, որք այնքան ստահակ են, որ կը յանդգնեն չախարհի առաջ յայտ առնել իրենց վիճակին ողորմելի ըլլալը:

Դարձեալ կըտես Վերջը կառավարութեան, և մասնաւոր Սայիդ փաշայի ատելութիւնը զըլ- խաւորապէս Ներսէսի դէմ և ազգն այդ անձ- նական ատելութեանն զո՞վ կը գնայ:

Չեն մտածել արդեօք թէ ինչ է այդ անձնա- կան հակառակութիւնը գոյանալուն պատճառը, և դժուար է արդեօք տեսնել թէ սա յառաջ ե- կած է լոկ և միմիայն այն պատճառաւ, որ Ներսէսն մի պահ չէ դադարած ինչի մօք իւր պարտքը կատարելէ: Ներսէսի աթոռի վրայ եթէ կարգադրուած Զակարն ըլլային, նոյնպէս անհաճելի պիտի երևին Սայիդին, սա տարբե- րութեան փոխադարձ, որ իր փառքն ու պար- ծանքն է, կը վայելէ այն ամեն անոնց սէրն ու համարումը, որք սիրտ և բանականութիւն ունին: Ներսէսի յաջորդը—եթէ կարելի է այսպիսի մարդոց յաջորդել առանց ծիծաղելի յաւակնու- թեան—այսօր մի միջոց ունի, անոր հայ թշնա- մաց, կամ որ նոյնն է, Բ. Գրան հաճելի անց- նելու համար: Այն է աթոռը քաղաքականութեան իր խօսքը հայոց ուղղելով՝ չմի ևս արտնչաք՝ ըսել, և դառնալով պաշտպան տէրութեանց ներ-

կայացուցիչներուն սա յայտարարութիւնը ընել, Վերջեմ ձերումը վսեմութիւններէ, որ իմաց տաք ձեր կառավարութեանց՝ թէ Հայաստան ոչ մի բարեկեցութեանց կարողութիւն ունի, թէ թշնամիներուն զրգումքն է, որ հարստահարու- թեանց սուտ պատմութիւններ հնարեցինք: Ա- մեն բարիք լիովին կը վայելին հայաբնակ գա- ռաւները, և եթէ յիւրաք մեր լաւութեանը փա- փաքող էք, կը խնդրեմք որ 61-դ յօդուածը չիղեալ համարելով, ոչ ևս ձանձրացնէք մեր կա- ռավարութիւնը, զմեզ պատրուակ ընելով: Մեր իղձը, մեր բարօրութիւնը մի բանի մէջ կը կա- յանայ, այն է մինչև ի կատարած աշխարհի մը- նալ օսմանցիկն քաղղին կապված, հլու իբրեւ դիակ և հաւատարիմ որպէս չունա:

Եթէ մի այսպիսի պատրիարք է այդ անձանց խնդրածը, թող չորոնեն շատ այժմեան եպիս- կոպոսաց մէջ, Դժուար չէ գտնալը:

Ն. Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

—Գերմանական լրագիրները հաղորդում են որ Բերլինի երրորդ և հինգերորդ ընտրողական շրջաններում ըստստագի համար լրացուցիչ ըն- տրութիւններին մէջ ընտրված են պրօգրէսիւս տե- ները Մունկէլ և Գրինտէր: Ասում են որ ազ- վոկատ Մունկէլ մասնաւոր անհաճելի է Բիս- մարկին, որովհետեւ մի ժամանակ նա պաշտպան էր Լոմա Արնիմի գործի մէջ Բիսմարկի դէմ:

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ ֆինանսական աշխարհի մի քանի խոշոր ներկայացուցիչներ ներկայացան միւնիստրների խորհրդի նախագահին զանազան բացատրութիւն- ներ պահանջելով ֆինանսների նոր միւնիստր Ալան-Տարբէի պրոգրամայի առիթով: Մի և նոյն ժամանակ նրանք ակնարկեցին չափից դուրս վե- րանորոգական անտեսական քաղաքականութեան նշանաւոր անյարմարութեան վրա: Դամբատա պատասխանեց նրանց, որ կարենալիս կամ ֆի- նանսների միւնիստրութեան ապագայ դիտաւո- րութիւններին հարցը նրանց չէ վերաբերում, և որ բօրայի գործը չէ խառնվել այդպիսի հարցե- րի մէջ: Զափաւոր կուսակցութեան լրագիրները չեն հաւանում ներքին գործերի նոր միւնիստրու- թեան կարգադրութիւնները և սաստիկ արմա- տական են համարում Պոլ Բէրի յայտնութիւն- ները: Պատգամաւորներին ժողովի նախագահ Բեր- սոնի օրգանք սաստիկ բանակու է շարունա- կում Դամբատայի լրագիրներին հետ:

ՎՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 նոյեմբերի: «Прав. Вѣстн.» լրագիրը հաղորդում է. Պետի- գորսկի շրջանի բաժանումը երկուսի՝ Նուլ- չինսկի և Պետիգորսկի, արդէն կայացաւ: «По- рядокъ» լրագիրը հաղորդում է. նոյեմբե- րի 23-ին 8½ ժամին երկրորդ փախճան- վեցաւ Պիրադով: «Новости» լրագիրը հա- ղորդում է. Կովկասեան փոխարքայութեան ոչնչացնելը հաստատված է, ոչնչանում է նոյնպէս Կովկասեան մասնաժողովը Ս. Պե- տերբուրգի մէջ: Կովկասի կառավարութեան նոր ձեռնադրութիւնը կը վերջանայ 1882 թւականին: Հետաւորով առաջարկեց հիմնա-ւորապէս վերաբնակ ոռոտոց նուահան- գիտանքի կայքերը:

ԿԱԼԿՈՒՑԱ, 23 նոյեմբերի: Գիւտեմբերի 6-ին էմիլը կարշաւէ Կարուլի վրա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 նոյեմբերի: Այսօր 11 ժամին սկսվեցաւ գեներալ Մրովինսկու, Ֆուրսովի և Տեգլեփի գործի քննութիւնը փակված դռներով և երգվեալ դատաւոր- ների մասնակցութեամբ Մեղադրում է Մու- րավեով: Պաշտպանում են Սպասովիչ, Գե- րարդ, Պասսովէր: Վկաները 50 մարդ են: Գործը երեւի երկու օր կը տևի:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԹՈՒՄԻ

Կ Օ Մ Ի Ս Ի Օ Ն Է Ր

ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապսպարանք:

19—20

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Երաժշտական խանութում, որ գտնվում է Արծրունու գաղերէայում, բնասարանի մօտ, երաժշտական իրերով առուտուրը շուտով կրճատելու պատճառով, այս նոյեմբերի 6-ից սկսած վաճառվում են սաստիկ արժան գներով նոտեր, երաժշտական գործիքներ, ջութակներ, ֆլեյտաներ, կլարնետներ, վիոլոնչելներ, գիտարներ և այլ երաժշտութեան վերաբերեալ իրեր ռուբլուց մինչև 80 Կոպէկ քիչքիւմով:

9—10

ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱԶՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ԹԷՅ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 Կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 Կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ ԹԷՅԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ ԹԷՅԻ համեմատական ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական խանութը կշռում է ՄԱՔՈՒՐ ԹԷՅ առանց ԹՂԹԻ և ԱՐՃՃԻ:

90—100

ԲԷՍՏՕՐԱՆԸ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆԻՄՕՏ

Մի նոր տիրոջ ձեռքն անցնելով, ստացել է այժմ մի բոլորովին այլ և ԳԵՂԵՅԻԿ ՏԵՍՔ, ունի ընտիր ձԱՇԵՐ և ԸՆԹՐԻՔՆԵՐ, նոյնպէս և լաւ ԽՄԻՉՔՆԵՐ: Գները շատ էժան են:

19—20

144 Արծրունու գաղերէայ 144 ամենաէժան պահեստ մերէի և հայերիներ:

Արտասահմանից եկած մի վարպետ շինում է պատրաստ և զարգացող ընդունում է էժան ու լաւ քան թէ ուրիշներ, կենդանակերպ ծաղիկներով զանազան տեսակ գերեզմանախան արձաններ: Հալիւթար, Շիրաճխանայի վերի ծայրը, ապուէկայի կարգը № 32 խանութը:

13—15

ՎԵՐԱԳՈՒՆԵՐ 4 ր., ծըծողներ 1 ր. ծաղկող ամբողջներ 1 ր. 50 Կ., ՓԱՅՏ-ԱԹՈՒ 4 ր., ԲԱԶԱՍԹՈՒՄ-ՄԱՀԱԿԱՆ 10 ռուբլ և աւելի, ԹԷՅԻ բաժաններ 25 և 30 Կ., մի աման քրոնցներ 50 Կ., պատուելա ծխողների համար 60 Կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: 10,000 զոյգ գուլթաններ 25 Կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒՂԱՆԵՐ 30 Կ.— 1 ր., 7,000 մատուցարաններ 5 Կ.—5 ր., 1,000 ՄԱՀԱԿԱՆՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բոժայէյ. 1 ր.—1 ր. 30 Կ., պարուսնի 40 Կ.—1 ր., 300 հատ բէկոյվեր 4 ր.—35 ր., 700 պրոմ ԿԻՍԱԿՆՈՎ, 10,000 ֆունտ ԹԷՅ ԹԷՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 Կ.: երկաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: 56—100

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷժԱՆ քան թէ ուրիշ տեղ. ԹԷՅ, կակաո, ՇՈՒՂԱՆԻ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժաններ, բոկալներ, ԹԷՅյամաններ, սուրճիներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանայու ամաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԶԳԵՍԱԿԱՆՆԵՐ, գգալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, ԹԻՈՂԹ, ծրարներ, տետրակներ, մատիաներ, ՀՐԱՆՑԱՆՆԵՐ, ՌԷՎՈՂՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէնկա, ԹԱՄՔԵՐ, սանձեր, ութներ, ՄԱՀԱԿԱՆՆԵՐ, երեսբիչներ, թաշկինակներ, կանանց գուլթաններ, մարդկերանց գուլթաններ, տուպետի սապոն, հոտաւէտ քրեր, շերքետ, ցիտրոնի մազնեղիս, խմորայի գինի, պօրտվէյն, խերս, կոնյակ և 1,000 այլ առարկաներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ վաճառականներին ՄԵՇ քանադութեամբ ծախվում է ԹԷՅ. պուգերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 Կ., 1 ր. 20 Կ., 1 ր. 40 Կ., 1 ր. 60 Կ. և 1 ր. 80 Կ., իսկ ամենաբարձր ԹԷՅԸ ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ: ՀՐԱՆՑԱՆՆԵՐ 20—60 ր. և 20Կ-ԲՈՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., բէկոյվերներ 4—34 ր., ԲՈՒՂ-ԴՈԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շէֆրդի դանակներ 3 ր. 50 Կ. դիւժներ, ալբոմներ կիսագնով, Ֆիլարոններ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և բէկոյվերների ԹԷՅԼԻՍՈՒՄ: 58—100

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 Կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 Կ. հատը, 10,000 բոկալ և բաժաններ 10 Կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 Կ. հատը, 10,000 ասեղ 8—40 Կ. հարկերը, 10,000 պինդներ 5 Կ., 5,000 շիշ պօրտվէյն և խերս 1 ր. հատը, 2,000 արշին կլէնկա 60 Կ.—2 ր. արշինը, 2,000 դիւժին մատիտներ և զրապիթեր 8 Կ. դիւժներ, 2,000 Փ. հնդկական բրինձ 7, 8 և 10 Կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէօշկա 50 Կ. ֆունտը, 600 անգլիական բէկոյվեր 1 ր. 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, տրիկո, ալբոմներ, ձեռնոց պալտօներ, գլխարկներ, վարդիկներ, հագուստ կէս գնով: Ծախվում է ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: Նոյն տեղը ծախվում է Ծովային ԽՈՏ պուգը 2 ր. 50 Կ.: 10—60

THE ORIENTAL GAZETTE
LA GAZETTE ORIENTALE

Le premier Janvier prochain paraîtra, à Londres la Gazette Orientale, journal hebdomadaire, publié en anglais et en français, consacré spécialement aux questions d'Orient et rédigé par des écrivains ayant une longue expérience du journalisme et la connaissance intime et personnelle des hommes et des choses de l'Orient.

Ce journal sera largement répandu dans tout l'Orient et parmi les personnes qui s'intéressent aux affaires de ces pays; il est appelé à prendre, sous peu, dans la presse, le premier rang comme organe spécial de toutes les affaires orientales et à rendre d'immenses services, non seulement aux colonies européennes et aux races chrétiennes de l'Orient, mais encore à porter la lumière dans certaines questions particulières et à en faciliter la solution. Il a donc droit, surtout en ce moment, de compter sur l'appui sympathique de tous ceux qui ont des intérêts quelconques dans ces contrées, et cela, en raison de la difficulté et même souvent de l'impossibilité de discuter librement, dans la presse locale, les questions du plus haut intérêt.

La direction prend l'engagement formel de faire parvenir son journal, quoi qu'il arrive, à tous ceux qui peuvent avoir un intérêt quelconque, à connaître la vérité, et elle garantit d'avance aux abonnés la réception régulière de chaque numéro.

Elle se fera toujours un devoir de faire bon accueil à toutes les communications d'un intérêt général, et de défendre la cause du droit, de la justice et de la vérité en assumant toute la responsabilité de ses articles et correspondances, sauf le cas où ses correspondants demanderaient la publication de leurs noms.

Le prix de l'abonnement est de 40 francs par an, celui des insertions est de 60 centimes la ligne.

E. St. J. Fairman

Redacteur

T. Harris

Secrétaire.

P. S.— Un des rédacteurs du Journal se trouve actuellement à Constantinople pour recevoir les communications personnelles ou confidentielles que l'on peut également adresser à M-r le Rédacteur en chef de la „Gazette Orientale“, aux soins de son agent

Mr R. F. Routh

№ 3 Halagian Han, Galata, Constantinople.

ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐԻՔԵՐ

Որոնք վաճառվում են ՋԱԲԱՐԱՆ ԳՐԻԳՐԵԱՆՑԻ „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՑՈՒՄ

1	Բագրատունի՝ Տան պատգամք. գրին է	25 Կ.
2	Աղայեանց՝ Անահիտ, հին զոյցը	50 „
3	Թզուկ, Թարգ. Տէր-Միքայիլեանցի	30 „
4	Աղբառ մանուկ կամ բարոյական վէպ.	20 „
5	Խաթաբայա Սուլթանկանցի	50 „
6	Չորս մանրավէպ Տէր-Աւետիսեանի	20 „
7	Հայերէն լոսո երկխոսների համար.	50 „
8	Տէր-Արթուրեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.	60 „
9	Կոստանանց՝ Գրաբառ բայերի խոնհարումը.	25 „
10	Թագուրեան՝ Փորձ լեզուագիտական հետազոտութեան	50 „

Եւս ստացուել է Րոստովի Տէր-Արամեանցի 1882 թուի ՕՐԱՅՈՑՑ, գրին է 15 Կօպ. գուլթանով առնողներին զիջում կը լինի:

Դուրս եկան մեր տպարանից և վաճառվում են նոյեմբերի 15-ից սկսեալ՝

Ա. ԱՄԵՆՕՐԵԱՅ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՕՐԱՅՈՑՑ

1882 Փ. Թ.

Մեծ թուանշաններով, հայկական կիւրակիներն տպուած են կապուտ գունով. իսկ Կայսերական ոսն օրերն տպուած են կարմիր գունով: Գրուած են Հայկական, Յուդիական, և Գրիգորեան բոլոր օրերը, ամիսները և թուականները: Լուսինը ևս գրուած է: Առ այժմ համառ. գրուած են: Օր պատմական անցքերի Հայոց, Մահ նշանաւոր անձանց Հայոց:

Օրացոյցի տախտակն զարդարուած է գեղաքանդակ գեղեցիկ պատկերներով, կրօնական և ազգային յիշատակարաններով. Գաստառակի, և Ս. Էջմիածնայ պատկերներով: Եւ այս բոլորը մի զարգ է ամեն մի հայու գրասենեակի համար:

Գ Ի Ն Ե Մ Ե Կ Ի Ո Ւ Բ Լ Ի

Բ. Մեծադիր ՕՐԱՅՈՑՑ 1882 թ. Գ.

Բոլոր Օրհ. հրց. մի. հր. և այլն գրուած են կարգաւ: Հանդերձ „ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ“ է. տ. յաւելուածով:

Սկզբում ԳԵՂԱՔԱՆԴԱԿ պատկերք.

ա. Առաքինագոր հայրապետին մերոյ

ՍՐԲՈՑՆ ՎՐԴԱՆԻՍԻ

բ. և Կարուց պաշարման

ԼԱԶԱՐԵԱՆՑԻ ՊԱՏԵՐԱԶՄԵ:

Գրին է մինչև 600 վերս 35 Կօպ.: իսկ նորանից բարձր՝ 40 Կօպ.:

գ. Փոքրադիր ՕՐԱՅՈՑՑ 1882 թ. Գ.

Բոլոր Օրհ. հրց. մի. հր. և այլն գրուած են կարգաւ: Հանդերձ 2 գեղաքան. պատկերներով. ԵՐԱՆԿԱՅԻՇԱՍԿԱՆ ՆԵՐՍԵՍ Ե. Կաթողիկոսն: Եւ ՉԵՄՍ-ԲՐԱՅՍ Հայասերն Անգղիացին: Գրին է 15 Կօպ.: Բոլոր 3 տեսակ օրացոյցներից գումարով գնողներին զիջում կը լինի:

Թմբադիր և հրատարակիչ Արզար Գուլամիրեանց
Ցանկացողը կարող են զիմել մեկ այս հասցեով. ՅԵ. Գ. Զրիւան
A. C. Гуламирянц